ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

05 Հոկտեմբեր 2009թ.
Ձեր 30.09.2008
N 16/13727

No Ե2009-9358

ՀՀ արտաքին գործերի նախարար
պարոն Է. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Ի պատասխան Ձեր 30.09.2008թ. 16/13727 թվակիր գրության՝ կից ներկայացնում ենք "Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին" Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի հայերեն տարբերակը, ինչպես նաև նշյալ կոնվենցիայի ստորագրման նպատակահարմարության մասին տեղեկանքը:

Առդիր՝ 24 էջ և էլեկտրոնային կրիչ:

Հարգանքով Գ. Պետրոսյան

Հայաստանի Հանրապետություն
Արտաքին գործերի նախարարություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՈՒՏՔ N 21744
07 ՕՍՏ 2009թ.

Կատ.՝ Միջազգային կապերի բաժին
010 56 37 91

0010, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Կառավարական շենք թիվ 3
հեռ. (374 10) 526831, Ֆաքս. (374 10) 543160
http://www.mss.am

ՏԵՂԵԿԱՆՔ

“Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին” Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ

“Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին” Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան երեխաների շահագործման և երեխաների հանդեպ սեռական բնույթի բռնությունների բոլոր դրսևորումների դեմ պայքարին ուղղված կանխարգելիչ, պաշտպանող և զոհերին աջակցող միջոցներ սահմանող համապարփակ միջազգային փաստաթուղթ է:

Դիտարկելով երեխայի բարեկեցությունը և սոցիալ-հոգեբանական զարգացումը որպես հիմնարար արժեքներ՝ կոնվենցիայի դրույթները խթանում են դրանց լիակատար և անխտրական պաշտպանության վերահսկող մեխանիզմի կիրառումը, խրախուսում այդ բնագավառում համագործակցությունը:

Կոնվենցիան համահունչ է նաև ոլորտում վարվող Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությանը: Ներկայումս, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի, մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Երեխայի հանդեպ բռնության և երեխայի անտեսման կանխարգելման պետական հայեցակարգը և դրա միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Հայեցակարգը հիմնված է «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 9-ի համապատասխան դրույթների վրա և նպատակաուղղված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» ԱՄԿ-ի կոնվենցիաների, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը:

Կոնվենցիայի ստորագրումը կնպաստի ոլորտում իրականացվող բարեփոխումների գործընթացին, համապատասխան վերահսկման մեխանիզմների հստակեցմանը, պետության կողմից ձեռնարկվող քայլերի արդյունավետության բարձրացմանը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կոնվենցիայի ստորագրումը գտնում է նպատակահարմար: